Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա, Հայաստանի կենսաբանական հանդես
Национальная Академия Наук Армении, Биологический журнал Армении
National Academy of Sciences of Armenia, Biological Journal of Armenia

*Տարբեր նյութեր* • *Разное* • *Miscellaneous*

# ԱՆՎԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆ ՈՒ ՍԱՆԿԱՎԱՐԺԸ

Գիտության և մանկավարժության բնագավառում լուրջ և նշանակալի նվաճումների ու ձեռքբերումների կեսդարյա ուղի է անցել վաստակաշատ գիտնական, Երևանի պետական համալսարանի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Լ.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի վեգետատիվ նյարդային համակարգի լաբորատորիայի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Գեղամի Բակլավաջյանը:

75 տարեկան հոբելյարը ծնվել է 1922թ. օգոստոսի 18-ին Ջուրբիայի Բուրսա քաղաքում: Սրջնակարգ կրթությունը ստացել է Բուլղարիայում (քաղաք Բուրգաս), ուր ավարտել է իտալական դպրոցը և գիմնազիան: 1946թ. ներգաղթել է Հայաստան և նույն թվին ընդունվել Երևանի պետական բժշկական ինստիտուտ: Գերազանցությամբ ավարտելով ինստիտ

Հ. Բակլավաջյանը 1952-54թթ. իր ուսումնառությունը շարունակում է ԳԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի ասպիրանտուրայում: 1955թ. հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական, իսկ 1966թ. դոկտորական թեզը: Ստանալով բժշկական գիտությունների դոկտորի աստիճան: 1974թ. ընտրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1986թ. ակադեմիկոս:

Հ. Բակլավաջյանի լայնածավալ և բեղուն գործունեությունը սկսվում է 60-ական թվականներից: Այդ տարիներին նրա ընտրած գիտական կարևորագույն ուղղություններից մեկը ընդերային ֆունկցիաների կարգավորման կենտրոնական մեխանիզմների ուսումնասիրությունն էր: Էլեկտրաֆիզիոլոգիական հետազոտությունների նորագույն մեթոդների ներդրմամբ նա հետազոտել է հիպոթալամուսի նեյրոնային կազմակերպումը: Նրա վարընթաց հեշտացնող ազդեցությունը ողնուղեղի մարմնական ֆունկցիաների իրականացման և մեծ կիսագնդերի կեղևի «ուղնած» նեյրոնների ակտիվացման մեխանիզմում: Այդ շրջանի փորձառական հետազոտությունների արդյունքներն ընդհանրացված են Հ. Բակլավաջյանի «Ուղեղի էլեկտրական ակտիվության վեգետատիվ կարգավորումը» մենագրության մեջ (Լենինգրադ, 1967): Առանձնահատուկ ուշադրության են արժանի Հ. Բակլավաջյանի և նրա աշխատակիցների կողմից հիպոթալամուսի ընդերազգայական նեյրոնների ակտիվության կարգավորման կեղևային մեխանիզմների բացահայտումը:

Պարզաբանվել է սիմպաթիկ և պարասիմպաթիկ նյարդերի աֆերենտ զգայական համակարգերի տեղակայումը հետին հիպոթալամուսում: Գիտական նորույթ ներկայացնող նշված հետազոտությունների արդյունքները ամփոփված են նրա «Հիպոթալամուսի ընդերամարմնական առբերիչ համակարգերը» մենագրության մեջ (Լենինգրադ, 1985):

Նշանավոր գիտնականի գիտական բեղմնավոր գործունեության մեջ առանձնահատուկ փուլ են կազմում գլխուղեղի երկարավուն ուղեղի և ողնուղեղի վեգետատիվ ֆունկցիաների ենթատեսաթմբային կարգավորման նեյրոնային մեխանիզմների ուսումնասիրությանը նվիրված հետազոտությունները: Գիտության համար արժանահիշատակ նորույթ է բազմաաստիճան գիտնականի կողմից առաջ քաշված ստեղծագործական միտքը, ըստ որի հիպոթալամուսում գոյություն ունի կոնոեզային և ողնուղեղի վեգետատիվ նեյրոնների ու ընդերազգայական առբերող համակարգերի ենթատեսաթմբային նեյրոնների առավելագույն ակտիվության շրջանների վերածածկում: Նա ձևակերպել է լայն ճանաչում ստացած վարկած, ըստ որի հիպոթալամուսի նեյրոնները բազմագործարկիչ, համաստիտվող-տարամիտվող բնույթի են, որոնց շնորհիվ իրականանում են

օրգանիզմի վեգետատիվ և մի շարք հույզային գործընթացներ համապատասխան միջավայրային պայմաններին: Նշված հիմնական հետազոտությունները ամփոփված են նրա «Հիպոթալամո-ընդերային ուղեղի նեյրոնային կազմակերպումը» մենագրության մեջ (1988թ.), որը 1990թ. Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի կողմից արժանացել է Օրբելու անվան մրցանակի:

Անվանի գիտնականի և նրա աշխատակիցների կողմից ուսումնասիրվել է նաև լիմբիկական ուղեղի սեկ այլ գոյացության, նշահամալիրի, դերը վեգետատիվ ֆունկցիաների կարգավորման մեխանիզմում: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նշահամալիրի ընդերազգայական նեյրոնների տարբերակումը, երկարավուն ուղեղի և ողնուղեղի հիպոթալամիկ ու պարասիմպաթիկ գոյացությունների շնչառական նեյրոնների ակտիվության նշահամալիրային կարգավորման նեյրոնային մեխանիզմների, արյան շրջանառության կարգավորման գործընթացում նշահամալիրի մասնակցության բացահայտումը: Հատկապես կարևորվում է գիտնականի կողմից ներկայացված նշահամալիրի առաջորդ և արտատար համակարգերի կազմակերպման նեյրոնային սխեմաները: Նշված ուղղության հետազոտությունների արդյունքներն ամփոփված են գիտնականի կողմից 1996թ. հրատարակված «Նշահամալիր-ընդերային ռեֆլեքսային ուղեղի կազմակերպումը» մենագրության մեջ:

1969 թ. սկսվում է նաև Հ. Բակլավաջյանի մանկավարժական գործունեությունը Երևանի պետական համալսարանի մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնում, ուր սկզբում աշխատանքներում է պրոֆեսորի, իսկ 1972թ.-1986 թ.-ին ամբիոնի վարիչի պաշտոնը: Հ. Բակլավաջյանի ակտիվ նախաձեռնությամբ ամբիոնում ներդրվում են միկրոէլեկտրաֆիզիոլոգիական հետազոտությունների նորագույն մեթոդներ, որոնք հետագայում հնարավորություն տվեցին ընդլայնել ժամանակակից էլեկտրաֆիզիոլոգիական հետազոտությունների շրջանակները:

Հ. Բակլավաջյանը գիտության տաղանդավոր կազմակերպիչ է: Նրա ղեկավարությամբ ամբիոնի կոլեկտիվը 1972 թ. ծեռնամուխ է լինում ընդերաբարձրնական ֆունկցիաների կարգավորման կենտրոնական մեխանիզմների ուսումնասիրությանը միջավայրի արտակարգ գործոնների ազդեցության պայմաններում: Թթվածնաքաղցի, վիբրացիայի, շառավղային արագացման պայմաններում ուսումնասիրվում էին սիրտ անոթային, շնչառական, արտաթորության, արյան մակարդման համակարգերի կարգավորման լիմբիկական մեխանիզմները: Գործնական կարևոր նշանակություն ունեն Հ. Բակլավաջյանի և ամբիոնի աշխատակիցների կողմից անդաստակալին վերլուծիչի տարբեր օղակների նեյրոնային կազմակերպման ուսումնասիրության արդյունքները, որոնք հնարավորություն են ընձեռնում պարզաբանել շարժողական ակտահարումների նեյրոնային մեխանիզմները:

Մեծ է Հ. Բակլավաջյանի ակադ. ամբիոնում կատարվող տեսական և գործնական անհայտ նշանակություն ունեցող գիտահետազոտական աշխատանքների մեկ այլ ուղղության բնագավառում ուսումնասիրել Հայաստանի տարբեր բնակլիմայական շրջաններում շնչառության պրոցեսի կարգավորման կենտրոնական մեխանիզմները թթվածնաքաղցի պայմաններում:

Նշանակալի ավանդ ունի Բակլավաջյանը նաև ամբիոնում հետազոտվող համակարգիչներով աշխատող մասնակցց գլխուղեղի մեծ կիսագնդերի տարբեր գոտիների գործառական վրձանի, նյարդահուզական լարվածության, հոգնածության զարգացման նյարդոֆիզիոլոգիական և հոգեֆիզիոլոգիական մեխանիզմների ուսումնասիրության բնագավառում:

Հ. Բակլավաջյանը 300 գիտական աշխատությունների հեղինակ է, այդ թվում 4 մենագրություն, մի շարք գիտահանրամատչելի գրքույկներ և ուսումնա-մեթոդական ձեռնարկներ: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 27 թեկնածուական և 4 դոկտորական թեզեր:

Բազմաստակ գիտնականի ակտիվ նախաձեռնությամբ և ղեկավարությամբ շուրջ երկու տասնյակ տարի Դիլիջանում պարբերաբար հրավիրվել են հանրամիութենական կոնֆերանսներ նվիրված վեգետատիվ նյարդային հասկակարգի ֆիզիոլոգիայի հարցերին: Մեծարգո հոբելյարը բազմիցս զեկուցումներով հանդես է եկել նախկին միութենական և միջազգային գիտաժողովներում, միջազգային համագումարներում ու կոնֆերանսներում: Նա դասախոսություններով հանդես է եկել Բուլգարիայի, Հունգարիայի, Ֆրանսիայի և մի շարք այլ երկրների համալսարաններում:

Մեծանուն ակադեմիկոսը բեղուն գիտամանկավարժական գործունեությանը զուգընթաց մասնակցում է նաև հասարակական աշխատանքների կատարմանը: Նա ՀՀ ԳԱՍ Բժշկա-կենսաբանական պրոբլեմային խորհրդի անդամ է, Հայաստանի ֆիզիոլոգների ընկերության նախագահի տեղակալ, Ուղեղի ուսումնասիրությունների և նեյրոգիտությունների միջազգային կազմակերպությունների անդամ ԱՊՀ-ի ֆիզիոլոգների ընկերության կենտրոնական խորհրդի, մի շարք հանդեսների («Մեչնիկովի անվան ֆիզիոլոգիական հանդես», «Նեյրոֆիզիոլոգիա», «Հայաստանի կենսաբանական հանդես») խմբագրական խորհրդի, մի շարք գիտական խորհուրդների անդամ:

Հիշարժան է նշել, որ Բուլգարիայում 1941-44թթ. ֆաշիզմի դեմ մղվող ընդհատակյա պայքարում ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար Հ. Հ. Բակլավաջյանը ճանաչվել է որպես

Ֆաշիզմի դեմ մղվող պայքարի առնչությամբ մարտիկ: Հայրենական մեծ պատերազմի մասնակից է: Պարգևատրվել է Բուլղարիայի ժողովրդական հանրապետության շքանշաններով ու հոբելյանական մեդալներով, «Պատվո նշան» շքանշանով:

Թեկուզև բոլորել է Հ. Բակլավաջյանի բազմավաստակ գիտնականի ու մեծ մանկավարժի, հանրավորված կյանքի 75-ամյակը, նա այսօր էլ լի է գիտական հետաքրքիր մտահղացումներով ու երիտասարդական ավյունով շարունակում է դասավանդել մայր ԲՈՒՀ-ի իր ամբիոնում, դեկավարել ասպիրանտների և հայցորդների գիտական հետազոտությունները, ուսանողների դիպլոմային աշխատանքներ, գրել արժեքավոր գիտական աշխատանքներ: Նա վայելում է ֆակուլտետի և ֆիզիոլոգիայի ինստիտուտի աշխատակիցների, ուսանողության, հանրապետության գիտական հասարակության սերն ու հավակրանքը: Այսօր նրա սաներից շատերը գիտահետազոտական ինստիտուտների, ամբիոնների և լաբորատորիաների դեկավարներ են և հասարակության մեջ գրաված իրենց դիրքով ու արժանիքներով նրախտապարտ են սիրելի ուսուցչին:

ՀՀ ԳԱԱ Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի կոլեկտիվի և ԵՊՀ-ի կենսաբանական ֆակուլտետի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի անունից՝ ջերմորեն յուրահատորելով հարգարժան ակադեմիկոս Հովհաննես Գեղամի Բակլավաջյանին ծննդյան 75 և աշխատանքային գործունեության 50-ամյակի առթիվ, մաղթում ենք քաջ առողջություն, երջանկություն ու ստեղծագործական նորանոր նվաճումներ:

*Վ. Ֆանարջյան*
*ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի*
*ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս*

*Ս. Մինասյան*
*ԵՊՀ կենսաբանական ֆակուլտետի մարդու*
*և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր*